ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6 (11)

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-27 ԿԱՅԱՑԱԾ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ

ք. Երևան **27 դեկտեմբեր 2019թ.**

Կառավարման խորհրդի հեռակա քվեարկությունը սկսվեց 2019 թվականի դեկտեմբերի 25-ին և ավարտվեց 2019 թվականի դեկտեմբերի 27-ին:

Քվեարկությանը մասնակցում էին՝

Կառավարման խորհրդի նախագահ՝

Ա. Հարությունյան - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար

Կառավարման խորհրդի անդամներ՝

Ա. Ասոյան - ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար

Ա. Ավանեսյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

Ք. Գրիգորյան - ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

Ա. Հայրապետյան - ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ

Բ. Փափազյան - «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի խորհրդի անդամ

Ս.Ալոյան - «Դասարան» կրթական ծրագրի հիմնադիր նախագահ

Ա. Բախշյան - «Հանրային դիվանագիտություն» հասարակական կազմակերպության նախագահի կրթության հարցերով խորհրդական

Ա. Մարտիրոսյան - «Դասավանդիր, Հայաստան» կրթական հիմնադրամի զարգացման գծով տնօրեն

Կառավարման խորհրդի հեռակա քվեարկությանը չի մասնակցել Կառավարման խորհրդի անդամ՝ Բեկոր Փափազյանը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Հավանություն տալ ՀՀ կրթության տեսչական մարմնի հաստիքացուցակում առաջարկվող փոփոխություններին:

Առաջարկվեց ՀՀ կրթության տեսչական մարմնի նախնական և միջին մասնագիտական կրթության վարչությունից 3 ծառայողի և ռիսկի գնահատման, ստուգումների պլանավորման, վերլուծությունների և գնահատման վարչության 1 ծառայողի տեղափոխել հանրակրթության վարչություն:

2. Հաստատել ՀՀ կրթության տեսչական մարմնի վերահսկողական գործառույթների ընթացքում գործածվող՝ ՀՀ մարզպետարանի և համայնքապետարանի կրթության հարցերով զբաղվող ստորաբաժանումներում իրականացվող վերահսկողական գործառույթների ընթացքում գործածվող, «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության (դպրոցի) զարգացման ծրագրի մշտադիտարկման», «ՀՀ կրթության տեսչական մարմնում հարուցված վարչական վարույթի մասնակիցների ծանուցման թերթիկ» ձևաթղթերը:

Քվեարկության համապատասխան նյութերը սահմանված ժամկետում ուղարկվել են կառավարման խորհրդի անդամների էլեկտրոնային հասցեներին: Քվեարկությունը համարվեց կայացած:

Քվեարկության արդյունքում՝

1. Ա. Հարությունյանը 1-ին և 2-րդ հարցերին քվեարկեց կողմ,
2. Ա. Ասոյանը 1-ին և 2-րդ հարցերին քվեարկեց կողմ,
3. Ա. Ավանեսյանը 1-ին և 2-րդ հարցերին քվեարկեց կողմ,
4. Ք. Գրիգորյան 1-ին և 2-րդ հարցերին քվեարկեց կողմ,
5. Ա. Հայրապետյանը 1-ին և 2-րդ հարցերին քվեարկեց կողմ,
6. Ս.Ալոյանը 1-ին և 2-րդ հարցերին քվեարկեց կողմ,
7. Ա. Բախշյանը 1-ին և 2-րդ հարցերին քվեարկեց կողմ,
8. Ա. Մարտիրոսյանը 1-ին և 2-րդ հարցերին քվեարկեց կողմ,

Քվեարկության արդյունքները՝

Հարց 1-ին՝ 8 կողմ:
Հարց 2-րդ՝ 8 կողմ:

Սույն արձանագրությանը ծանոթանալուց և համաձայնություն տալուց հետո Կառավարման խորհուրդը որոշեց.

1. Հավանություն տալ ՀՀ կրթության տեսչական մարմնի հաստիքացուցակում առաջարկվող փոփոխություններին:

2. Հաստատել ՀՀ կրթության տեսչական մարմնի վերահսկողական գործառույթների ընթացքում գործածվող՝ ՀՀ մարզպետարանի և համայնքապետարանի կրթության հարցերով զբաղվող ստորաբաժանումներում իրականացվող վերահսկողական գործառույթների ընթացքում գործածվող, «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության (դպրոցի) զարգացման ծրագրի մշտադիտարկման», «ՀՀ կրթության տեսչական մարմնում հարուցված վարչական վարույթի մասնակիցների ծանուցման թերթիկ» ձևաթղթերը:

Կառավարման խորհրդի նախագահ՝

_____ **Ա. Հարությունյան**

ստորագրություն

Կառավարման խորհրդի քարտուղար՝

_____ **Ա. Գևորգյան**

ստորագրություն